ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ «ՆՈՐ - ԴԱՐ» ԼՐԱԳՐՈՒՄ

«Նոր - դար» լրագիրը որպես երկար ժամանակ գործող պարբերական, մեծ դեր է խաղացել հայ մշակույթի և նրա անբաժան մասը կազմող դպրոցի և մանկավարժական մտքի զարգացման գործում: Թերթը մեծ տեղ է հատկացրել դպրոցական գործին, ուսուցչին: Թերթը գտնում էր, որ ուսուցչի պարտականությունն է օգնել հայ ժողովրդին հասնելու քաղաքակիրթ աստիճանի, պայքարելու հայ հասարակական կյանքում բռնակալական ժամանակներից մնացած վատ սովորույթների դեմ, հայ կանանց ուսուցանել հոգևոր հարստությունները պահպանելու գաղտնիքը: Կրթության միակ չափանիշը «Նոր - դարը» համարում էր մասսայականությունը, իսկ դպրոցի ուղղության հիմնական ելակետը՝ ազգային ոգին: Թերթը մեծ տեղ է հատկացրել աշխարհով մեկ սփռված հայության, ուշադրության կենտրոնում էին հատկապես Թուրքիայի և Պարսկաստանի հայերը: Թերթը տեսնում էր այն վայրագությունները, որ կատարվում էին Թուրքիայում:

Սուլթանական Թուրքիան հալածում, բանտարկում և աքսորում էր հայ ուսուցիչներին, դասագրքերում և մամուլում արգելում Հայաստան բառի գործածումը: Այս քաղաքականությունը բացասաբար է անդրադառնում ժողովրդի գրագիտության վրա: Առանց այն էլ ժողովուրդը խարխափում է տգիտության և խավարի մեջ: Եղած դպրոցներն էլ բարվոք վիճակում չեն: Ուսուցիչները հեռանում են դպրոցներից, որովհետև նրանց համար ամենատարրական պայմաններն անգամ չկան: Վարժարաններում տիրապետում են խառնականությունները, աշակերտները կռվում են ուսուցիչների հետ, պայքար է գնում ուսուցիչների ու տեսուչների միջև:

«Գավառական հոգաբարձուք» հոդվածը լուսաբանում է հայկական դպրոցների վիճակը: Գավառական հոգաբարձուները, մեծամասամբ տգետ մարդիկ էին, որ ոչ մի կապ ունենալով մանկավարժության հետ, տնօրինում էին վերջիններիս ճակատագիրը, ուսուցիչներ էին ընտրում և արձակում, վանքապատկան գումարները ծախսում էին ցանկացած ձևով: Սակայն չարժե խտացնել գույները, որովհետև կային մի շարք հայտնի դպրոցներ և վարժարաններ: Օրինակ՝ Ներսիսյան դպրոցը, Սանասարյան վարժարանը, Թավրիզի ուսուցչական խումբը:

Թերթը 1888 թվականին հայկական դպրոցների նոր կանոնադրության առիթով արձանագրում է. «Հայ ուսուցչի դրությունը երբեք լավ եղած չէ, բայց

վերջացավ թեմական տեսչությունը, ուսուցչի միակ ձեռնահաս պաշտպանը, նոր դրությունը ավելի վատթարացավ, և գրեթե անտանելի դարձավ: Ուսուցիչների բարոյական և նյութական ապահովության հարցերը մնում էին թերթի օրակարգում նաև հետագա տարիներին:

Հայտնի է, որ հայահալած քաղաքականությունը ցարիզմն ավելի խորացրեց 19-րդ դարի 90-ական թվականներին: Սա առաջին հերթին հարվածում էր հայ դպրոցին:

«Նոր - դարը» հայ իրականության մեջ առաջիններից մեկն էր, որ հասկացավ ցարական կառավարության 1889 թվականի հրահանգի միտումնավորությունն այն է, հայկական դպրոցներում ուսուցչություն անելու իրավունք պիտի ստանային այն անձինք միայն, ովքեր ուսուցչական ցենզ՝ արտոնություն էին ստացել կառավարման հատուկ հանձնաժողովի կողմից: Ժամկետն անցնում էր, իսկ ցենզավոր ուսուցիչների պատճառով շատ հայկական դպրոցներ փակվում էին: Կաթողիկոսը 1894 թվականին կառավարությունից մեկ տարի էլ պահանջեց: Չմերժեցին, քանի որ այդ մեկ տարին էլ ոչինչ չէր ավելացնելու հայ անդիպլոմ վարժապետների մի ստվար բանակի գիտելիքների վրա: Թերթը շտապեցնում էր, թե հոգալ է պետք, որ մի քանի ամսում շատ ուսուցիչներ կարողանան հաջող քննություն հանձնել և վկայական ստանալ: Բայց մինչև Խրիմյանը խնդրանք էր ներկայացնում իշխանություններին՝ երկարաձգելու ցենզի հարցը, Կովկասի կառավարչապետ Շերեմետևը, ստուգելով հայ եկեղեցական ծխական դպրոցների գոյության աղբյուրները հայտարարում էր, թե դրանք չեն համապատասխանում 1884 թվականի փետրվարի 16-ի կանոններին, որովհետև դրանց մեծ մասը պահվում են ոչ թե եկեղեցիների եկամուտների հաշվին, այլ գյուղական հասարակության: Նա պնդում էր, որ դրանք կամ պետք է հանձնել ուսումնական վարչությանը, կամ էլ պիտի փակել: Ծրագրավորվող սահմանափակումներն այլ նպատակ էին հետապնդում: 1896 թվականին կառավարությունը փակեց ծխական դպրոցները, 203-ից թողնելով միայն 28-ը: Հաջորդ տարի մնացածներն էլ հանձնվեցին ժողովրդական լուսավորության մինիստրության տնօրինությանը, այսինքն՝ պետական վերահսկողություն էին սահմանում դասավանդվող առարկաների և ծրագրերի վրա, խիստ կրճատվում էին հայոց պատմության, աշխարհագրության և նույնիսկ կրոնի դասաժամերը[1]:

Թերթը տպագրեց այս հրամանը, չկարողանալով այլ բան գրել: Թերթի գործիչներն ավելի վճռական քայլերի չէին կարող դիմել, որովհետև ցարական

---

[1] Վ.Ս.Երկանյան, Պայքարն հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870-1905), Երևան, 1970:

ռեակցիայի տարիներին ամենափոքրիկ առիթով փակվում էին լրագրերը, հարյուրավոր հոդվածներ գրչի մեկ հարվածով հանվում էին թերթի էջերից:

«Նոր - դարը» գերադասում էր լռել ու հարմար առիթի դեպքում իր վրդովմունքն ու զայրույթը հասցնել ընթերցողներին:

Թերթը բացահայտում էր հայ դպրոցի ներքին կյանքում, ուսման բովանդակության, ուսուցման կազմակերպման ձևերի ու մեթոդների հարցում տեղ գտած թերությունները: Թերթը չնայած չի ողջունել աղջիկների ուսումը, այնուամենայնիվ, չի զլացել իր էջերում տեղ հատկացնել այդ հարցը շոշափող հոդվածներին: Աղ.Պետրոսյանը պարբերաբար նյութեր է տպագրում աղջիկների և ընդհանրապես ուսումնական հարցերի, դպրոցների մասին: «Աղջկանց կրթությունը» հոդվածը նա սկսում է Ժյուլ Սիմոնի խոսքերով. «Տղային կրթության տալն այնքան մեծ նշանակություն չունի, որքան աղջկանը, որովհետև կրթելով տղային, կրթում է մի միայն մի մարդու, իսկ կրթելով աղջկան՝ դուք կրթում եք մի ամբողջ ընտանիք»[2]: Պետրոսյանը նշում է, որ Հայաստանի գավառական քաղաքներում, առհասարակ, շատ քիչ են ուշադրություն դարձնում աղջիկների կրթության վրա: Նա փորձում է տալ երևույթի պատճառը. «Այդպիսի անտարբերությունը դեպի աղջկանց կրթությունը ծագում է նրանից, որ մեր հասարակությունը շատ վայրենի հասկացողություն ունի կրթության մասին: Ծնողներն աղջկանց երկար ուսում տալու սկզբունքը ավելորդ են համարում, ի նկատի առնելով այն հանգամանքը, թե «մեզ ինչ, որ ուսում առավ մեր աղջիկը, էսօր - էգուց մարդու է գնալու»: Հենց դրա համար էլ նրանք աշխատում են կարելուցն չափ քիչ փող «փչացնել» իրենց աղջկա կրթության և դաստիարակության համար, որովհետև այն աղջիկը, որի կրթության համար ծնողները պետք է փող ծախսեն, մարդու գնալով՝ ուսումը իր հետ տանում է ուրիշի տուն, իսկ կար ու ձևի վրա ավելի ախորժակով են ուշադրություն դարձնում, որովհետև աղջիկները մինչև մարդու գնալն իրենց ծնողների համար են աշխատում»[3]:

Այդ հոդվածին խմբագրությունը գրում է հետևյալ պատասխանը. «Կարծես թե աղջիկը մարդու գնալով, կար ու ձևը նրան էլ պետք չէ, կարծես թե աղջիկը մի որևէ դպրոցում ուսում ստանալով, դա լավ մայր լինելու գրավական է: Որոշ չափով ուսումն անհրաժեշտ է, իհարկե, ինչպես և կրթությունը, բայց ինչպե՞ս և ի՞նչ կրթություն. այդ է խնդիրը և մեկ էլ այն, թե որտեղ են ծախսում այդ կրթությունը»[4]:

Հաջորդ համարում Աղ. Պետրոսյանը գրում է. «Հենց դրա համար էլ

---

[2] «Նոր - դար», 1899, N 203:
[3] «Նոր - դար», 1899, N 203:
[4] «Նոր - դար», 1899, N 205

նրանք աշխատում են, որ կարելուցն չափ քիչ փող «փչացնեն» իրենց աղջկա կրթության և դաստիարակության համար, որովհետև «այն աղջիկը, որի կրթության համար ծնողները պիտի փող ծախսեն, մարդու գնալով՝ ուսումը յուր հետ տանում է ուրիշի տուն, իսկ կար ու ձկի վրայ ավելի ախորժակով են ուշադրություն դարձնում, որովհետև աղջիկները մինչև մարդու գնալն իրենց ծնողների մոտ են աշխատում: Ահա այդ է պատճառը, որ այդպիսի մօր երեխաներն առաջին անգամ մտնելով ուսումնարան, ցույց են տալիս այնպիսի ոչ ցանկալի կողմեր, որոնք միայն յատուկ են կոպիտ և անուս ծնողների երեխաներին: Եվ այդ ամենի մեջ մեղավոր են հանդիսանում ծնողները, որոնք, իրենց նեղ «ես»-ն ազգի առաջ ունենալով զոհ են բերում իրենց աղջկանց մտավոր և բարոյական ուժերը, այն աղջկանց՝ որոնք ապագայում պիտի լինեն մայրեր, բայց այժմ զրկուած են մայրական պատրաստութիւնից երեխայի կրթության վերաբերյալ: Լաւ կրթուած մօր երեխան երեսը պարզ կարող է կրկնել մանկավարժական այն աֆորիմը, որ ասում է «Ես մանուկ հասակում մօրիցս սովորեցի այնքան, որքան չի կարող սովորել բնագէտը մինչև իւր խորին ծերութիւնը»: Սակայն ի՞նչ ասէ այն երեխան, որի մէջ հէնց առաջին տարիներում արմատացել են մարդկային բնութեան ամենատխրալի յատկութիւնները: Այդպիսի երեխաները կլինեն մի մարմանացած նախատինք, դէպի իրենց պապերի անսահման եսականությունը, որը զրկել է իրենց մօրը կրթութիւնից և խեղտել է նրա բարոյականության և այլ շարժառիթները:

Ծնողներն իրենց «ես»-ի շահերին երկրպագելով, բարձր են թողնում մի պարտականութիւնը, որ մի ամօթալի կնիք է դնում ապագայ սերնդի վրայ: Այդպիսի մարդկանց, հարկավոր է կանգ առնել, և ասել՝ «յո յերթաս»[5]:

Վրա է հասնում 1896 թվականը, երբ փակվում են ազգային – ծխական դպրոցները, հետապնդվում են բարեգործական ընկերությունները, 1903 թվականին բռնագրավվում է եկեղեցապատկան գույքը: Հայկական դպրոցները, կառավարությունը փակում է այն պատրվակով, որ դրանք պահվում են ոչ թե եկեղեցիների միջոցներով, ինչպես նախատեսված էր Պոլոժենիեի համապատասխան հոդվածով, այլ հայ հասարակությունից գանձվող գումարներով: Իր հաշվետվության մեջ Յանկովսկին հրատարակում է կառավարչապետության կողմից անցկացված ստուգման արդյունքները, որից պարզվել էր, որ հայկական դպրոցներից միայն 22 են պահվում եկեղեցու հասույթներով: Հրահանգի համաձայն, կաթողիկոսը պետք է կարգադրեր դպրոցները հանձնելու ուսումնական իշխանության իրավասությանը: Այդ կարգադրությունը չի արվում և գրեթե բոլոր դպրոցները փակվում են:

---

[5] «Նոր - դար», 1899, N 206